



Ապահովագրական կազմակերպությանն անհրաժեշտ է բժշկ-փորձագետ

Պաշտոնի անվանումը. Անձնական հայտերի կարգավորման վարչության բժշկ-փորձագետ
Աշխատանքային ժամեր. երկ-ուրբ ժ 9:00-18:00

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

Ապահովում է սահմանված կարգով վստահված Առողջության Կամավոր Ապահովագրության Պայմանագրերով Ապահովագրված անձանց անձնական հայտերի սպասարկումը

Կատարում է ԱՊՊԱ անձնական վնասների վերաբերյալ հայտերի սպասարկումը, բժշկական կենտրոններին հաստատում է Կանխավճարները, իրականացնում է հաշիվ-ապրանքագրերի ճշգրտում, իրականացնում Բժշկական որոշումները

Կատարում է Դժբախտ Պատահարների վերաբերյալ հայտերի սպասարկումը, կայացնում Բժշկական որոշումները

Իր անմիջական կամ Վարչության ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում՝ ուղղված աշխատանքների որակի բարելավմանը

Նեղ մասնագիտական գիտելիքները և աշխատանքային փորձը ծառայեցնում է Ընկերության շահերին՝ պատահարների հետ կապված մասնագիտական քննարկումների ընթացքում

Մասնագիտական կարծիք է տրամադրում Ընկերությանը ուղղված դիմում-բողոքների և պատասխանների պատրաստման համար

Ապահովում է սպասարկման ընթացքում ապահովագրական և բժշկական գաղտնիքի ապահովմանը

Պայմանագրերի սպասարկման ընթացքում հավաքագրում և անմիջական ղեկավարին է տրամադրում առաջացող խնդիրը, առաջարկություններ է ներկայացնում վերջիններիս վերաբերյալ

Կազմակերպում է նախնական պարտադիր բուժզննումների գործընթացը

Կատարում է տնօրինության որոշումների և ներքին իրավական ակտերի պահանջներից բխող իր պարտականությունները

Կատարում է անմիջական ղեկավարի՝ ՀՀ օրենսդրությանը և Ընկերության ներքին իրավական ակտերին չհակասող կարգադրությունները